

հայ ժողովուրդին, այդ՝ իրենց ամենէն հաւատարիմ՝ տարրը: Այսօրուան իրականութիւնը ապացոյց դրան:

Ճանաչի՛ր քեզ — հին իմաստութիւն է: Այդ նշանակում է նաեւ՝ ճանաչիր չըջապատդ:

Հին իմաստութիւն է: Հետեւե՛նք դրան: Ուղեղով: Սրտին թոյնենք իր բաժինը — բանաստեղծութիւնը:

Բերլին

(Վերջ)



ՀԱՅԵՐԸ ՌՈՒՄԱՆՈՅ ՄԷՋ

Գրեց՝ Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԳԼՈՒԽ Ը.

ՀԱՅ ԿՐԹԱՐԱՆՆԵՐԸ ՌՈՒՄԱՆՈՅ ՄԷՋ

ԻՍԿԱՊԷՍ կը ճմլուի սիրտը մարդուն՝ երբ կը փորձուի ակնարկ մը նետել ռումանահայ դպրոցներու պատմութեան վրայ, որովհետեւ այդ կը նշանակէ հասկնալ թէ ինչպէ՛ս հիւժեցաւ ու սպառեցաւ ռումանահայը, որովհետեւ այդ կը նշանակէ տեսնել թէ՛ ի՞նչ պիտի ըլլան վաղը գեւ հայ մնացած սա քանի մը չըջանները եւս, եթէ իրենց վարժարանները տպւելու հնարաւորութիւն չունենան ա՛լ:

Մանրամասնութիւնները քրքրելէ առաջ, ըսենք անմիջապէս թէ ռումանահայերը ունեցած են մտաւոր եւ կրթական ոգեւորութեան չըջան մը, որ կարճ տեւած է դժբախտաբար: Ունեցած են իրենց բարդաւաճ դպրոցները, որոնք պահ մը կրցած են վառ պահել հայ լեզուն ու անոր հետ հայ ոգին հին հայ դպրութի մը մէջ: Այդ դպրոցներուն հետ շիջած է նաեւ դարերուն աւանդը՝ փլատակներ միայն հասցրելով մեզի:

Հին ՕՐԵՐՈՒ ՄԷՋ

Անկարելի եղաւ ինծի ստուգել թէ ռումանահայերն ե՞րբ ունեցած են իրենց առաջին կրթարանը: Ո՛չ մէկ գրաւոր արձանագրութիւն գտայ որ ապացուցանէր մեզի թէ հայ դպրոց գոյութիւն ունեցած է ժԹ. դարէն առաջ: Թէ ուսման հետամուտ էին հայերը՝ ոչ մէկ տարակոյս այդ մասին: Կաթողիկ եպիսկոպոս մը, Պանտինուս, որ ԺԷ. դարուն գտնուած է Նաչ, կ'ըսէ թէ իր օրով առնուազն քսան

դպրոցներ գոյութիւն ունէին Նաչի մէջ, երկու հարիւր աշակերտներով, որոնց մէջ ռումէններ, ութթէններ, յոյներ եւ հայեր կային:

Հաւանաբար հայ եկեղեցիները գոնէ խուցեր ունէին ուր տիրացու կը պատրաստուէր: Մեզի հասած են այդ խուցերուն մէջ գրուած ձեռագիրներն իսկ: Մտաւոր կեանք անշուշտ որ կար այդ եկեղեցիներու կողքին: Բայց նոր օրերու իմաստով կրթական շարժում գտնելու համար պէտք է մինչեւ ԺԹ. դարու սկիզբները դալ: Ու արդէն այդ օրերուն կը դուզադիպի հայ կեանքի մէջ դպրոցներու առաջին փթթումը քիչ մը ամէն տեղ:

ՆԱՇԻ ՄԷՋ

Նաչէն կ'ուզենք սկսիլ ռումանահայ դպրոցներու կեանքը պրպտել: Պուրէշէն է այսօր ռումանահայութեան շնչերակը, բայց Նաչն էր անոր միջնաբերդը երէկ: Մոլտովայի մայրաքաղաքը՝ որ մեծ դեր կատարած է ռումէն ժողովուրդի մտաւոր կեանքին մէջ, կ'որից եղած է հայ կեանքին համար ալ, մանաւանդ երբ Մոլտավ իշխանները իրենց գահը Մուշովայէն Նաչ փոխադրեցին, իրենց հետ Նաչ բերելով նաեւ հայ եպիսկոպոսին աթոռը, ուրեմն եւ հայ կեանքի բազկերակը: Ասկէ զատ Նաչը նուազ ենթակայ էր թրքական ազդեցութեան՝ քան Վալաքիոյ մայրաքաղաքը Պուրէշէն, ուր աւելի կենդանի եւ աւելի անմիջական էր չըջալուծմը Պոլսոյ եւ թուրք բարքերուն հետ: Նաչի մէջ, հետեւաբար, հայերը եւս հետոս էին այդ չփոմէն, ու կրնային աւելի տեւել իրենց ա-